«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» մայիսի 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ԳԲԽ-15/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի 11.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.05.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2015թ. մարտի 24-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկատվական կայքում (www.gnumner.am) ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տեղադրվել է «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ միկրոկազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման

պարզեցված կարգի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի նախաորակավորման հայտարարություն, որով նախաորակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2015 թվականի ապրիլի 3-ը՝ մինչև ժամը 12:00 ներառյալ:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ նախաորակավորման հայտեր են ներկայացրել թվով 5 մասնակիցներ: Գնահատող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 8-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ բավարարվել են նախաորակավորման ընթացակարգին մասնակցած թվով 4 մասնակիցների հայտերը, իսկ մյուս՝ 5-րդ մասնակցի հայտը գնահատվել է անբավարար: Նույն N 3 արձանագրությամբ հաստատվել է նաև գնման ընթացակարգի հրավերը և պայմանագրի նախագիծը, ինչը տրամադրվել (ուղարկվել) է նախաորակավորված մասնակիցներին: Տրամադրված հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2015 թվականի ապրիլի 20-ը՝ մինչև ժամը 12:00 ներառյալ:

2015 թվականին մայիսի 5-ին հանձնաժողովի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկվել է ծանուցում, համաձայն որի 2015 թվականի մայիսի 7-ին հանձնաժողովը հրավիրում է նիստ՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման և գների նվազեցման բանակցությունների շուրջ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ 2015 թվականի մայիսի 7-ին հայտերի գնահատման արդյունքների հրապարակման և մասնակիցների հետ գնային առաջարկների նվազեցման նպատակով բանակցությունների համար հանձնաժողովի հրավիրած նիստում հանձնաժողովի կողմից բավարար են գնահատվել բոլոր 4 մասնակիցների ներկայացրած հայտերը: Նիստի ժամանակ հանձնաժողովի *քարտուղարի կողմից բարձրաձայն հայտարարվել է 10 րոպե բանակցելու ժամանակ*, որի ընթացքում մասնակից Արամ Հովհաննիսյանը նվազեցրել է իր գնային առաջարկը՝ իր հայտով տրամադրված 7 500 000 ՀՀ դրամի փոխարեն առաջարկելով

պայմանագրի կատարման համար գին՝ 5 650 000 ՀՀ դրամի չափով, որը 40000 ՀՀ դրամով պակաս է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի (հայտով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպության) գնային առաջարկից: «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի կողմից գնային առաջարկի փոփոխություն չի ներկայացվել, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն չի ներկայացել նիստին, իսկ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի լիազոր անձը հանձնաժողովին խնդրել է տրամադրել 10-15 րոպե ժամանակ՝ տնօրենի կողմից գնային առաջարկի վերանայման համար, քանի որ տնօրենն անձամբ չէր մասնակցում այդ նիստին, և Ընկերության անունից հանդես էր գալիս լիազոր անձ՝ Տարոն Վարազդատյանը: «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրենի ներկայանալուց հետո հանձնաժողովի քարտուղարը հայտարարել է, որ նիստն ավարտված է, և որ 10 րոպեի ընթացքում «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել գնային առաջարկի նվազեցման մասին որևէ տեղեկություն, հետևապես հայտով ներկայացված գինը մնում է անփոփոխ, իսկ հաղթող մասնակից է համարվում Արամ Հովհաննսիսյանը: (2015 թվականի մայիսի 7-ի հայտերի գնահատման արդյունքների հրապարակման և մասնակիցների հետ գնային առաջարկների նվազեցման նպատակով բանակցությունների համար հանձնաժողովի անցկացրած նիստի արձանագրությունը այս պահի դրությամբ չի ուղարկվել «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ին):

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն որպես բողոքի առարկայի և պահանջի իրավական հիմք նշել է հետևյալը.

1. Գնահատող հանձնաժողովի կողմից գների նվազեցման բանակցությունների նախաձեռնումն ու իրականացումն ապօրինի է՝ հակասում է «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 5-րդ ենթակետին, որի համաձայն միաժամանակյա բանակցություններ վարվում են միայն այն դեպքերում, երբ առաջարկված նվազագույն գները հավասար են կամ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Ընկերությունը նշել է նաև, որ ներկայացված նվազագույն գների միջև հավասարություն չի եղել, և

գնահատող հանձնաժողովի կողմից որևէ գնային առաջարկ չի որակվել որպես գնման նախահաշվային գումարը գերազանցող գին:

2. Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), մինչդեռ 2015 թվականի մայիսի 7-ի հայտերի գնահատման արդյունքների հրապարակման և մասնակիցների հետ գնային առաջարկների նվազեցման նպատակով բանակցությունների համար հանձնաժողովի անցկացրած նիստին ներկա չի գտնվել մասնակից «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն կամ վերջինիս համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչը:

3. Ըստ էության, «գների նվազեցման բանակցություններ» կոչվող գործընթացը վերածվել է հրապարակային սակարկության, սակայն առանց նախապես հրապարակված և իրավական հիմքերով ամրագրված ընթացակարգերի և խաղի կանոնների: Նշված փուլի իրականացման վերաբերյալ 2015 թվականի մայիսի 5-ին հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցմամբ չի մատնանշվել միաժամանակյա բանակցություններ վարելու իրավական հիմքերն ու ընթացակարգերը: Նիստի ժամանակ հանձնաժողովի քարտուղարի կողմից բարձրաձայն հայտարարվել է 10 րոպե բանակցելու ժամանակ, սակայն որևէ կերպ չի արձանագրվել այդ ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ կամ հրավերով որևէ կերպ կարգավորված չեն նշված ժամանակի տևողության որոշումը, սկզբի և ավարտի ֆիքսումը, ինչպես նաև միաժամանակյա բանակցություններ անցկացնելու կարգը: Փաստացիորեն, նշված բանակցությունները որևէ կերպ կարգավորված չլինելով, ընթացել են բացարձակ կամայական (սուբյեկտիվ) ձևով:

4. Անհասկանալի է, թե մեկ ֆիզիկական անձը (մասնակից Արամ Հովհաննիս-յանը) ինչպես է բավարարել հրավերով սահմանված՝ միաժամանակ երկու փորձագետ ունենալու պահանջին:

Հանձնաժողովը հետևողական չի եղել 2015 թվականի ապրիլի 20-ի հայտերի բացման նիստում հանձնաժողովի քարտուղարի կողմից բարձրաձայն հնչեցրած այն փաստին, որ Արամ Հովհաննիսյանի կողմից հայտով ներկայացված աշխատանքային ռեսուրսների առկայության մասին հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված նվազագույն աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշներին (կատարողը պետք է ունենա առնվազն երկու հիմնական փորձագետներ՝ տեղական և միջազգային փորձառությամբ), քանի որ նախաորակավորված միևնույն ֆիզիկական անձը չի կարող ապահովել երկու փորձագետներ, և բավարարել է նշված մասնակցի հայտը՝ համարելով հրավերին համապատասխան:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն նշել է նաև, որ Արամ Հովհաննիսյանն, որպես նախաորակավորված ֆիզիկական անձ, ներկայացրել է հրավերով նախատեսված պահանջներին համապատասխան երկու փորձագետների համար որակավորումը հիմնավորող փաստաթղթեր (ընդ որում, այդ երկու փորձագետներից մեկն Արամ Հովհաննիսյանն է), մինչդեռ այդ փորձագետներից 2-րդը ո՛չ մասնակցել է նախաորակավորման ընթացակարգին, ո՛չ էլ հետևապես գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է նախաորակավորված մասնակից: Նշված որակավորման չափանիշին անհամապատասխան հայտ ներկայացնելու վերաբերյալ բարձրաձայնվել է նաև հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 20-ի հայտերի բացման նիստում՝ քարտուղարի կողմից:

Հրավերի 1-ին մասի 2-րդ կետում (ՄԱՍՆԱԿՑԻ՝ ՆՈՒՅՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ) «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի բավարար գնահատման համար ներկայացվող պահանջները շարադրված են եղել հետևյալ կերպ.

«Փորձագետ Հ-1. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակում,

Փորձագետ Հ-2. Հաշվապահական հաշվառման ոլորտի իրավական փորձաքննություն»:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կարծիքով՝ Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և գնումների

մասին ՀՀ օրենսդրությանը, իսկ գնահատող հանձնաժողովի որոշումը հակասում է ՀՀ գնումների օրենսդրությանը, քանի որ չեն պահպանվել և/կամ չեն իրացվել առնվազն ստորև ներկայացված օրենսդրական դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միկրոկազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման պարզեցված կարգի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից Արամ Հովհաննիսյանին գնման ընթացակարգին որպես հաղթող մասնակից ճանաչելու որոշումը ուժը կորցրած համարել և «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ին Ընթացակարգով հաղթող մասնակից ճանաչել:

2. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.05.2015թ. թիվ 1/93/828864-15 գրությամբ ներկայացրել է «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով բանակցային ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը

նախապես հրապարակելու միջոցով «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով բանակցային ընթացակարգով միկրոկազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման պարզեցված կարգ մշակելու նպատակով խորհրդատվական ծառայությունների գնման նախաորակավորման հայտարարությունը 24.03.2015թ. հրապարակվել է տեղեկագրում: Հայտեր են ներկայացրել «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն, «Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ և «Պարադիգմա Արմենիա» ՓԲԸ կոնսորցիումը, Արամ Հովհաննիսյանը, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորման հայտարարությունը և հրավերը կազմվել են ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին և գնման գործընթացը սկսելու օրվա դրությամբ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված հրավերների օրինակելի ձևին համապատասխան:

Նախաորակավորման հայտերի բացման նիստին գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձանաժողով) որոշմամբ «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, Արամ Հովհաննիսյանի, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի նախաորակավորման հայտերը գնահատվել են բավարար և մասնակիցները ներառվել են ցուցակում՝ որպես նախաորակավորված մասնակիցներ, որոնց տրամադրվել է «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 20.04.2015թ.:

Պատվիրատուն նշել է, որ «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով Ընթացակարգի հրավերով պահանջվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բավարարման համար Արամ Հովհաննիսյանը ծառայությունների մատուցման համար գործակալության պայմանագրով որպես փորձագետ ընդգրկել է Լ. Հարությունյանին:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, Արամ Հովհաննիսյանի, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար և 07.05.2015թ. հրավիրվել է հայտերի գնահատման արդյուքների հրապարակման և ընտրված մասնակցին որոշելու համար գների նվազեցման բանակցությունների նիստ՝ «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով

հրավերով սահմանված կարգով: Հանձնաժողովի նիստին չէր ներկայացել բավարար գնահատված մասնակիցներից «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գների նվազեցման բանակցությունների նիստին, Հանձնաժողովի կողմից սահմանվել է գների նվազեցման բանակցություն-ների համար 10 րոպե ժամանակ: Գների նվազեցման բանակցությունների սկսվելուց հետո Արամ Հովհաննիսյանը ներկայացրել է նոր գնային առաջարկ, որը ցածր էր «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի հայտով ներկայացված գնից, որից հետո «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի բանակցությունների համար լիազորություն չունեցող ներկայացուցիչը՝ Տ. Վարազդատ-յանը, խնդրել է երկարաձգել բանակցությունների համար նախատեսված ժամկետը՝ մինչև «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրենի նիստին ներկայանալը, որը դժգոհություն է առաջացրել Արամ Հովհաննիսյանի մոտ:

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ բոլոր մասնակիցները պատշաճ ծանուցվել են գների նվազեցման նիստի օրվա, ժամի մասին, ինչպես նաև ծանուցվել են, որ բանակցություններին կարող են մասնակցել մասնակցի համապատասխան լիազորություն (լիազորագիր) ունեցող ներկյացուցիչը, բանակցությունների համար հատկացված ժամկետի ավարտին հայտարարեցին ընտրված մասնակցի անունը:

Պատվիրատուն նշել է նաև, որ բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտին գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով Արամ Հովհաննիսյանը ճանաչվել է ընտրված մասնակից, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը տեղեկացրել է, որ «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով գնման գործընթացը սկսվել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգում փոփոխություն անելու վերաբերյալ որոշումը ուժի մեջ մտնելը, ուստի գների նվազեցման բանակցությունները կազմակերպվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 96-րդ կետի 9-10-րդ ենթակետով և հրավերի 8.2.3 կետով սահմանված կարգով:

Պատվիրատուն նշել է, որ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 96-րդ կետի համաձայն՝ գների նվազեցման բանակցությունների կազմակերպելիս բոլոր մասնակիցների նիստին մասնակցությունը պարտադիր չէ: Բանակցությունների համար սահմանված ժամանակահատվածը ֆիքսվել է նույն սկզբունքով ինչ, որ Հանձնաժողովի հայտերի բացման նիստը սկսելու ժամն է ֆիքսվում: Գների նվազեցման բանակցությունները կազմակերպվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 96-րդ կետի 9-10-րդ ենթակետով և հրավերի 8.2.3 կետով սահմանված կարգով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովը հայտերը և ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել է «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով հրավերով սահմանված կարգով: «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին բավարարելու համար Արամ Հովհաննիսյանը ներկայացրել է Լ. Հարությունյանի հետ գործակալության պայմանագիրը և Լ. Հարությունյանի որակավորումը հավաստող համապատասխան փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի հիման վրա հանձնաժողովի որոշմամբ՝ Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացրած հայտը գնահատվել է բավարար՝ հաշվի առնելով, որ որպես փորձագետ խորհրդատվան ծառայությունների մատուցման աշխատանքներում գործակալության պայմանագրով ներգրավվում է Լ. Հարությունյանին:

<u>3. ԳԲԽ-15/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-15/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միկրոկազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման պարզեցված կարգի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 2015թ. մարտի 24-ին հրապարակ-

վել է «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի նախաորակավորման հայտարարությունը:

2. Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ն, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն, «Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ և «Պարադիգմա Արմենիա» ՓԲԸ կոնսորցիումը, Արամ Հովհաննիսյանը և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2015թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել՝

ա) «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, Արամ Հովհաննիսյանի և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար և ներառել ցուցակում՝ որպես նախաորակավորված մասնակիցներ:

բ) «Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ և «Պարադիգմա Արմենիա» ՓԲԸ կոնսորցիումի հայտը գնահատել անբավարար:

4. Հրավերի 1-ին մասի 2.1 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ աշխատանքային ռեսուրսներ:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 2.3) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում, աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

2) մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝ կատարողը պետք է ունենա առնվազն երկու հիմնական փորձագետներ տեղական և միջազգային փորձառությամբ, հետևյալ որակավորման նվազագույն պահանջներով.

Փորձագետ Հ-1. Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակում՝

• Փորձագետը պետք է ունենա հաշվապահական հաշվառման, աուդիտի կամ պետական ֆինանսների կառավարման ոլորտում բարեփոխումների խորհրդատվական ծառայությունների մատուցման, այդ թվում նաև համապատասխան ոլորտների կարգավորման օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակման, նվազագույնը 5 տարվա փորձ, ինչպես նաև տվյալ ոլորտներում գործունեության ոչ պակաս, քան 10 տարվա աշխատանքային փորձ:

• Կրթությունը՝ տնտեսագիտություն, հանրային կառավարում, ֆինանսներ, հաշվապահական հաշվառում կամ հարակից այլ մասնագիտությամբ ոլորտի ակադեմիական հաստատության նվազագույնը մագիստրոսի աստիճան:

Փորձագետ Հ-2. Հաշվապահական հաշվառման ոլորտի իրավական փորձաքննություն՝

• Փորձագետը պետք է ունենա հանրային կառավարման մարմինների (ցանկալի է՝ ֆիսկալ ոլորտի), այդ թվում նաև կարգավորման օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման նվազագույնը 5 տարվա փորձ, որը նպատակաուղղված կլինի պետական ֆինանսների կառավարման ոլորտի կարգավորմանը և համապատասխան բարեփոխումների իրականացմանը:

• Փորձագետը պետք է տիրապետի հաշվապահական հաշվառման ոլորտին, այդ թվում տվյալ ոլորտի կարգավորման միջազգային զարգացումներին, ինչպես նաև ունենա տվյալ ոլորտներում գործունեության ոչ պակաս, քան 10 տարվա աշխատանքային փորձ:

• Կրթությունը՝ ֆինանսներ, իրավագիտություն, հաշվապահական հաշվառում կամ հարակից այլ մասնագիտությամբ, ոլորտի ակադեմիական հաստատության նվազագույնը մագիստրոսի աստիճան:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.04.2015թ. ժամը 14:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության՝

• 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է հայտով ներկայացված փաստաթղթերը և մասնակցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը՝ Արամ Հովհաննիսյանի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատելու համար որպես Հրավերով պահանջվող փորձագետ հայտով ներկայացվել է Լ. Հարությունյանի անունը, սակայն հայտով ներկայացված չէ մասնակից՝ Արամ Հովհաննիսյանի և Լ. Հարությունյանի համատեղ գործունեության կարգով մասնակցության համար «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

• 2-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Արամ Հովհաննիսյանն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել Արամ Հովհաննիսյանի և Լեռնիկ Հարությունյանի միջև 28.04.2015թ. կնքված թիվ 1 գործակալության պայմանագիրը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2015թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Արամ Հովհաննիսյանի որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու համար սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային

օրվա ընթացքում Հանձնաժողովին է ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող շտկված փաստաթղթերը:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2015թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության՝

- 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնումների համակարգողը ամփոփել է մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ըստ որի «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, Արամ Հովհաննիսյանի և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:
- 2-րդ կետի համաձայն՝ քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատման արդյունքների հրապարակման և գնի նվազեցման բանակցությունների նիստը հրավիրել 2015թ. մայիսի 7-ին ժամը 10:30-ին:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2015թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 8 արձանագրության՝

- 1-ին կետի համաձայն՝ նկատի ունենալով, որ գնահատման արդյունքում «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի, «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, Արամ Հովհաննիսյանի և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող և նիստին մասնակցում են հայտ ներկայացրած մասնակիցների ներկայացուցիչները, քննարկման արդյունքում գնահատող Հանձնաժողովը որոշել է վերջիններիս հետ կազմակերպել գների նվազեցման բանակցություններ՝ *բանակցությունների համար սահմանելով 10 րոպե ժամանակ*:
- 2-րդ կետի համաձայն՝ բանակցության արդյունքում հայտ ներկայացրած մասնակիցներից «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի և «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները նոր գնային առաջարկ չեն ներկայացրել, Արամ Հովհաննիսյանը ներկայացրել է նոր գնային առաջարկ:
- 2.1 կետի համաձայն՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակիցների կողմից ներկայացրած վերջնական գնային առաջարկը առանց ԱԱՀ-ի
1	Արամ Հովհաննիսյան	5 650 000

2	«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ	8 000 000
3	«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ	5 690 000
4	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ	14 500 000

- 3-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների և ներկայացված գնային առաջարկների հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել Արամ Հովհաննիսյանին:

Արամ Հովհաննիսյանն ընտրված մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

4. ԳԲԽ-15/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի 11.05.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած 15.05.2015թ. թիվ 1/93/828864-15 գրությունը և կից փաստաթղթերը, «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանակցային ընթացակարգի դեպքում պատվիրատուն պայմանագրի պայմանների շուրջ բանակցում է նախապես որակավորված մասնակիցների հետ և կնքում պայմանագիր:

Նույն հոդվածի 3-րդ մասի երկրորդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով կարող է բանակցային ընթացակարգ կազմակերպվել, եթե արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, որի բնույթը կամ դրան առնչվող ռիսկերը տվյալ գնումը բաց կամ սահմանափակ ընթացակարգով իրականացնելը ժամկետի առումով դարձնում են անհնար, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում պատվիրատուն՝

1) կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ և նախաորակավորված մասնակիցների հետ բանակցում է վերջիններիս ներկայացրած հայտերի շուրջ՝ լավագույն առաջարկը ընտրելու նպատակով.

2) երաշխավորում է մասնակիցների իրավահավասարությունը.

3) կարող է բանակցային ընթացակարգ իրականացնել հաջորդական փուլերով՝ կիրառելով հրավերով նախատեսված չափանիշները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-

Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 96-րդ կետի համաձայն՝ արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ կազմակերպվելու դեպքում՝

7) հայտերի գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվում են բավարար գնահատված մասնակիցները: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.

8) հայտերի գնահատման արդյունքները հրապարակվում են գնահատող հանձնաժողովի նիստում, որի ընթացքում ընտրված մասնակցին (մասնակիցներին) որոշելու համար բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով.

9) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստ կազմակերպելու մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է էլեկտրոնային եղանակով՝ նշելով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում.

10) միաժամանակյա բանակցություններում ներգրավվում են միայն բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները: Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցի հետ առանձին բանակցություններն արգելվում են.

11) բանակցություններում ներգրավված յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնի առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: Բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, որի հետ Օրենքի 9-րդ և 33-րդ հոդվածների համաձայն կնքվում է պայմանագիր:

Հրավերի 1-ին մասի 8.1 կետի համաձայն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար,

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 1-ին մասի 8.2.3 կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքները հրապարակվում են գնահատող հանձնաժողովի նիստում, որի ընթացքում ընտրված մասնակցին (մասնակիցներին) որոշելու համար բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով:

Տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Արամ Հովհաննիսյանի հայտով ներկայացված փաստաթղթերը և մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը՝ Արամ Հովհաննիսյանի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատելու համար որպես Հրավերով պահանջվող փորձագետ հայտով ներկայացվել է Լ. Հարությունյանի անունը, սակայն հայտով չի ներկայացվել մասնակից՝ Արամ Հովհաննիսյանի և Լ. Հարությունյանի համատեղ գործունեության կարգով մասնակցության համար «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված Հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

Արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով Արամ Հովհաննիսյանը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է իր և Լ. Հարությունյանի միջև 28.04.2015թ. կնքված գործակալության պայմանագիրը, ըստ որի՝ գործակալը՝ Լ.Հարությունյանը վերոհիշյալ պայմանագրով պարտավորվել է պրինցիպալի՝ Ա.Հովհաննիսյանի հանձնարարությամբ կատարել հաշվապահական հաշվառման

ոլորտի իրավական փորձաքննության ծառայություններ, որոնք կապված են Ա.Հովհաննիսյանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հայտարարած «ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/5» ծածկագրով մրցույթին մասնակցելու հետ:

Նկատի ունենալով, որ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում Արամ Հովհաննիսյանի կողմից շտկվել է, վերջինս ներկայացրել է Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված Հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները), ուստի գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը Արամ Հովհաննիսյանի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող գնահատելով՝ չի խախտել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և Հրավերի 1-ին մասի 8.1 կետրով սահմանված պահանջները, հետևաբար այս մասով «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի բողոքով ներկայացրած այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գների նվազեցման բանակցությունների նախաձեռնումն ու իրականացումն ապօրինի է և հակասում է «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետին, ապա հայտնում ենք, որ, նախ, ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով: Վերոհիշյալ Ընթացակարգը սկսվելու պահին (2015թ. մարտ) գործել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, որի 96-րդ կետի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերի դրույթներով ղեկավարվել է Պատվիրատուն՝ բանակցային ընթացակարգի ժամանակ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ նախաձեռնելով ու իրականացնելով, ինչը բխում է նաև Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջներից:

Բացի այդ, Ընկերության բողոքում նշված պատճառաբանությունն այն մասին, որ նիստի ժամանակ Հանձնաժողովի քարտուղարի կողմից բարձրաձայն հայտարարվել է 10 րոպե բանակցելու ժամանակ և բանակցությունները որևէ կերպ կարգավորված չլինելով, ընթացել են բացարձակ կամայական (սուբյեկտիվ) ձևով, անհիմն է, քանի որ բանակցություններն իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Մասնավորապես, մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը (10 րոպեն լրանալը) մասնակիցներին հնարավորություն է տրվել վերանայել իրենց գնային առաջարկները: Քանի որ, ըստ Կարգի 96-րդ կետի, բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, ուստի Պատվիրատուի կողմից բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած Ընացակարգի մասնակից Արամ Հովհաննիսյանը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է ընտրված մասնակից («Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը նոր գնային առաջարկ չի ներկայացրել):

Տվյալ պարագայում գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը գործել է Կարգի 96-րդ կետի 11-րդ ենթակետի և Հրավերի 1-ին մասի 8.2.3 կետի համաձայն, ուստի այս մասով նույնպես «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 7-ի որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, առաջարկում ենք «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի 11.05.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-15/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան